# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**գ. Տեղ** **9 նոյեմբերի 2018թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N15-Ա հրամանի, 2018 թվականի հունվարի 25-ի N01/17.1/426-18 հանձնարարականի, 2018 թվականի փետրվարի 2-ի N01/17.1/606-18 և 2018 թվականի հուլիսի 23-ի N01/17.1/5217-18 համաձայնությունների, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի N12-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 6-9-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 16 բնագավառներում՝

<u>Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն:</u>

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 16 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2018 թվականի նոյեմբերի 6-9-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5. N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ 25 էջից բաղկացած կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:
2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Տեղ համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:
4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Տեղ համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքի ղեկավար՝**

Տեղի

**Ն. Շաղոյեց**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում
իրականացված իրավական և
մասնագիտական հսկողության արդյունքների
ամփոփման վերաբերյալ 2018 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 16 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N16 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 9-ը, իսկ առանձին դրույթների մասով՝ համայնքի

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| **Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում** | | | | |
| 1.19. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Չի պահպանված | Համապատասխան փաստաթղթերը բացակայում են: | Միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ: | Մեկ ամիս |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.20. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Չի պահպանված | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա որոշման համաձայն, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որի շրջանակներում նաև Տեղ համայնքն է: | Առաջարկվում է աջակցել նշված փաստաթղթերի մշակմանը և ապահովել դրույթի կատարումը: | Մեկ ամիս |
| 1.21. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Թերի է | Համայնքի հողերի օգտագործման սխեմաները համայնքի ամբողջ վարչական տարածքի համար չեն հաստատված, այլ առանձին մի քանի բնակավայրերի մասով: | Միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ | Մեկ ամիս |
| 1.30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | Թերի է | Համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թիվը 9 է, որի պարագայում ավագանին 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N21-Ա որոշմամբ ստեղծել է 3 հատ մշտական հանձնաժողով: Հանձնաժողովների նիստեր չեն գումարվել: 2018 թվականի փետրվարի 28-ին համայնքի ավագանու երկու անդամների հրաժարականների արդյունքում ավագանու անդամների թիվը պակասել է 2-ով և դարձել է 7 (համայնքի ավագանու արձանագրություն N1, 2018-02-28): ՏԻՄ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ համայնքի 9 և ավելի անդամ ունեցող ավագանին պետք է ունենա մշտական հանձնաժողովներ, իսկ 9-ից պակաս անդամների դեպքում կարող է ունենալ նման հանձնաժողովներ: | Առաջարկվում է ապահովել ՏԻՄ օրենքի դրույթների պահպանումը: | Այսուհետ |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| **1** | **2,3,4** | **5** | **6** | **7** |
| 2.12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանը համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) ներկայացված լինելը: | Չի պահպանված | Նման գործառույթ չի իրականացվել: | Առաջարկվում է պարզել դրույթի կատարման անհրաժեշտությունը և ապահովել կատարումը: | Մեկ ամիս |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 2.13. Համայնքի ղեկավարի որոշման առկայություն համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ: | Չի պահպանված | Նման գործառույթ չի իրականացվել: | Առաջարկվում է պարզել դրույթի կատարման անհրաժեշտությունը և ապահովել կատարումը: | Մեկ ամիս |
| 2.16. Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում: | Չի պահպանված | Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում չի իրականացվում | Առաջարկվում է ապահովել դրույթների կատարումը: | Մեկ ամիս |
| 3.12. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման առկայություն: | Թերի է | Հարկերի հավաքումն ամբողջությամբ չի կատարվում, և այդ պարագայում հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվում: | Առաջարկվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ | Մեկ ամիս |
| **Քաղաքաշինություն** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.01. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: Ներկա պահին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Տեղին: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին: | Կոմիտեին անհրաժեշտ ժամկետներում |
| 1.02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, չունի գոտևորման նախագիծ: Ներկա պահին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Տեղին: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին | Կոմիտեին անհրաժեշտ ժամկետներում |
| 6.04. Պահպանվում են շինարարության թույլտվության տրամադրման ժամկետները /10 օր, 15 օր/, ըստ նախատեսվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի | Թերի է պահպանված | Խախտվել է շին. թույլտվություն N 3 20,08,2018թ մասով: Շին. թույլտվություն N 3 20,11,2017թ և շին. թույլտվություն N 4 22,11,2017թ մասով չկա համայնքի հետ նախագծի-համաձայնեցման թվագրումը Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի պահանջները և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի պահանջները Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Թերի է պահպանված | Շին. թույլ N 3 20,11,2017թ, շին. թույլ N 4 22,11,2017թ, շին. թույլ N 1 17,03,2018թ, շին. թույլ N 2 04,05,2018թ, շին. թույլ N 3 20,08,2018թ, շին. թույլ N 4 03,09,2018թ, շին. թույլ N 5 03,09,2018թ, շին. թույլ N 6 03,09,2018թ շին. թույլ N 7 14,09,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Այսուհետ՝ մշտապես |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | Թերի է պահպանված | շին. թույլ N 3 20,11,2017թ, շին. թույլ N 4 22,11,2017թ, շին. թույլ N 1 17,03,2018թ, շին. թույլ N 2 04,05,2018թ, շին. թույլ N 3 20,08,2018թ, շին. թույլ N 4 03,09,2018թ, շին. թույլ N 5 03,09,2018թ, շին. թույլ N 6 03,09,2018թ շին. թույլ N 7 14,09,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Այսուհետ՝ մշտապես |
| 10.02. Հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկի հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N 1, կետ 12, 13) | Թերի է պահպանված | Ցանկեր չեն սահմանված: | Սահմանել ցանկերը | 2 ամիս |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Թերի է պահպանված | Առկա է ոչ բոլոր գերեզմանատների համար: | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: | 2 ամիս |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Թերի է պահպանված | Հաճախ տրամադրվում են առանց սահմանված չափերի պահպանման: | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: | 2 ամիս |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Գերեզմանատները մաքրվում են, սակայն բացակայում են ցուցանակները: | Տեղադրել անհրաժեշտ նյութերը: | 2 ամիս |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 10.08. Գերեզմանատների սանիտարական գոտու պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում հավելված N4, կետ 10 | Թերի է պահպանված | Հին գերեզմանատների մասով չի կատարվում: | Այսուհետ ապահովել դրույթի կատարումը՝ սահմանված կարգով: | Մշտապես |
| **Հողօգտագործում** | | | | |
| 43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ: | Թերի է պահպանված | Հողային հաշվեկշիռը կազմված է, սակայն համաձայնեցված չէ: | Համաձայնեցնել համապատասխան մարմինների հետ: | 2 ամիս |
| **Առևտուր և ծառայություններ** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 01. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 02. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի սույն օրենքով ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 03. Առևտրի օբյեկտները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 05. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող ցուցանակով | Թերի է պահպանված | Սալ-Քար ԳԱԶ ՍՊԸ-ին պատկանող Տեղ համայնքի Քարաշեն գյուղի Արցախյան խճուղի թիվ 1 հասցեում գործող ԱԳԼՃԿ-ի հասարակական զուգարանը չի համապատասխանում ստանդարտներին | Ապահովել թերության վերացումը | Երկու ամիս |
| 06. Առևտրի իրականացման վայրը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 07. Առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝<br>1) ձեռքի սայլակներով և մինչև ավտոկանգառ դրանց տեղաշարժն ապահովող ուղիներով.<br>2) իրենց հատկացված հողատարածքի սահմաններում գործող ավտոկանգառով.<br>3) ՀՀ օրենսդրությանը համապատասխան կառուցված կենցաղային հարմարություններով և սանիտարական հանգույցով, վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: Առևտրի իրականացման վայրերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 10. Ապրանքը վաճառքի հանելուց առաջ առաջարկվող ապրանքի որակի ստուգումն ըստ արտաքին հատկանիշների. սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 11. Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման տվյալ վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առևտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա պետք է զետեղվի համապատասխան տեղեկատվություն | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 13. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել՝ վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների)՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեություն իրականացնելու համար | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 14. Մանրածախ առևտուրն իրականացվում է խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի առևտրի կետերում, առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքի կազմակերպման և բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերի, շրջածախ առևտրի, էլեկտրոնային կապի, դիլերների միջոցով և ավտոմատներով | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 15. Գնված պատշաճ և ոչ պատշաճ որակի ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում են ՀՀ օրենքով սահմանված կարգով: Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և ՀՀ օրենքով սահմանված տոնական օրերին | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 16. Դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին (սպառողին) վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման և (կամ) վերադարձման | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 18. Կրպակներում վաճառքի են թույլատրվում միայն արտադրական կշռափաթեթավորում ունեցող և հատային ապրանքները | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 19. Կրպակներում արգելվում է վաճառել չափափորձարկում պահանջող ապրանքները | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 20. Արգելվում է ալկոհոլային խմիչքների վաճառքն ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի օբյեկտներում | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 21. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքը թույլատրվում է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանող սարքավորումներով և գործարանային արտադրության ավտոցիստեռններով | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 22. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքը ՀՀ օրենքով սահմանված կարգով արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 24. ՀՀ օրենքով սահմանված կարգի համաձայն արտադրողները, մատակարարները, այդ թվում՝ դիստրիբյուտորները մատակարարման պայմանագրերով ապրանքների (այդ թվում՝ արտադրատեխնիկական նշանակության) վաճառքն իրականացնում են առանձնացված խանութների, սպառողական ապրանքների շուկաների, ապրանքային պահեստների, ցուցահանդես-վաճառքի | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 25. Դիստրիբյուտորի և դիլերի գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ օրենքով սահմանված կարգով թույլատրվում է միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |
| 26. ՀՀ օրենքով սահմանված կարգով ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում արգելվում է օգտագործել այլ անձանց պատկանող և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունը | Թերի է պահպանված | Համայնքի կողմից 2017 թվականին ուսումնասիրություն չի կատարվել՝ (Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 17 պրիմ 1 հոդված) | 2018 թվականից իրականացնել ուսումնասիրություն | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 38. ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն | Թերի է պահպանված | Համայնքի տարածքում գործող 3 օբյեկտներից 2-ը չունեն թույլտվություն, չեն դիմել ստանալու համար | Հարուցել վարչական վարույթ | Սահմանված կարգով և ժամկետներում |
| **Առողջապահություն** | | | | |
| 2.19. Ձմռանը փողոցների, ճանապարհների հետիոտնի համար նախատեսված և երթևեկելի մասերը, հրապարակների, զբոսայգիների հետիոտնի մասերը մաքրված են ձյունից և սառույցից: | Թերի է պահպանված | Մասնակի է կատարվում: | Սյուհետ ապահովել լրիվ մաքրումը | Այսուհետ |
| 3.02. Ջրամատակարարման բաշխիչ ցանցերում առկա է խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված (մանրէաբանական զգայորոշական ցուցանիշներով սահմանված հաճախականությամբ): | Թերի է պահպանված | Թերի է պահպանված այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից | Համայնքի կողմից ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում մեծացնել ստուգումների հաճախականությունը | Մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 3.03. Մինչև ջուրը բաշխիչ ցանց մղելը առկա է խմելու ջրի մնացորդային քլորի պարունակության հսկողության իրականացում: | Թերի է պահպանված | Թերի է պահպանված այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից | Համայնքի կողմից ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում մեծացնել ստուգումների հաճախականությունը | Մշտապես |
| 3.04. Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը մանրէաբանական ցուցանիշներով համապատասխանում է նորմերին՝ նորմատիվների գերազանցում չի արձանագրվել ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում: | Թերի է պահպանված | Թերի է պահպանված այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից | Համայնքի կողմից ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում մեծացնել ստուգումների հաճախականությունը | Մշտապես |
| 3.05. Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակությամբ (մնացորդային ազատ քլոր և այլն) համապատասխանում է նորմերին: | Թերի է պահպանված | Թերի է պահպանված այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից | Համայնքի կողմից ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում մեծացնել ստուգումների հաճախականությունը | Մշտապես |
| **Սոցիալական պաշտպանություն** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 2.01. Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից | Թերի է պահպանված | Միայն համայնքապետարանի և մշակույթի տան շենքերն են հարմարեցված | Միջոցներ ձեռնարկել բոլոր շենքերում պայմաններ ապահովելու ուղղությամբ | Այսուհետ՝ մշտապես |
| **Մշակույթ** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 02. Մշակութային կազմակերպությունների (թանգարան, գրադարան, թատրոն, համերգասրահ, մշակույթի տուն, կենտրոն և այլն) բնականոն գործունեության ապահովման աջակցում: | Թերի է պահպանված | Համայնքում բացակայում են երգարվեստի, թատերական արվեստի, երաժշտաարվեստի ուսուցման կազմակերպություններն ու խմբակները: Գործում է միայն պարի ուսուցման խումբը: Համայնքում գործող մշակութային կազմակերպությունների հիմնական աշխատանքը պետք է դառնա մշակութային կյանքի ակտիվացումն ու համայնքի մշակութասեր մարդկանց ընդգրկվածությունը կազմակերպվող միջոցառումներին | Բնականոն մշակութային գործունեություն իրականացնելու և համայնքի մշակույթն էլ ավելի զարգացնելու համար անհրաժեշտ է մշակույթի կենտրոններում բացել գեղարվեստական կրթություն իրականացնող խմբեր, կազմակերպել հաշվետու միջոցառումներ: Ստեղծագործական խմբեր բացելու և համայնքում գեղարվեստական կրթությունն իրականացնելու համար հրավիրել | Այսուհետ՝ մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 06. Հայ մշակույթի և արվեստի, հասարակական-քաղաքական գործիչների և մշակութային նշանավոր իրադարձությունների, հոբելյանների կազմակերպման աջակցում: | Թերի է պահպանված | Տարվա և ամսվա համար կազմվող աշխատանքային պլաններում պետք է հստակ նշվեն հասարակական քաղաքական գործիչներին և մշակութային նշանավոր իրադարձություններին, հոբելյաններին նվիրվող և նախատեսվող միջոցառումները, ամսվա մեկ օրը հատկացնել հոբելյաններին կամ նշանավոր իրադարձություններին | Պահել հատուկ գրանցամատյաններ, ակտիվացնել համայնքի մշակույթի պատասխանատուների աշխատանքները, համայնքապետարանին և մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը ներկայացնել կիսամյակային հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների և միջոցառումների | Մշտապես |
| 07. Տարածաշրջանին բնորոշ ազգային ավանդական արհեստագործության զարգացման ծրագրերի իրականացման աջակցում: | Թերի է պահպանված | Աջակցել շնորհալիներին, բացել արհեստների ուսուցման խմբակներ | Հաշվառել համայնքի շնորհալիներին, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ | Մշտապես |
| 08. Արհեստագործական և ժողովրդական ինքնագործ խմբակների գործունեության աջակցում: | Թերի է պահպանված | Նյութատեխնիկական բազայի անհրաժեշտություն | Ուշադրության կենտրոնում պահել շնորհալիներին, խրախուսել | Մշտապես |

| Նախատված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 09. Ժողովրդական վարպետների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում, ոլորտի տարբեր ճյուղերի զարգացման խթանում: | Թերի է պահպանված | Համայնքում զարգանում է գորգագործությունը, նկատվում է ժողովրդական արհեստների վերականգման շարժ | Տրամադրել համապատասխան տարածքներ, ընդգրկել վարպետներին և համագործակցել նրանց հետ | Մշտապես |
| 10. Պատմամշակութային հուշարձանների պահպանության ոլորտում պետական սեփականություն համարվող պատմամշակութային հուշարձանների պահպանմանն ուղղված միջոցառումներին աջակցում: | Թերի է պահպանված | Աջակցությունը թերի է: | Հնարավորինս ավելացնել աջակցության մասշտաբները | Այսուհետ՝ մշտապես |
| **Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | | |
| 3. Հայաստանի Հանրապետության Նախագահի «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» մրցանակների համար անցկացվող համանուն ստուգատեսներին ներկայացնելու նպատակով համայնքներում նոր մարզական կառույցների և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների առկայություն: | Թերի է պահպանված | Մարզական կառույցների վերականգման խնդիր | Տրամադրել տարածքներ, մարզագույք՝ առողջ ապրելակերպի համար ստեղծել նպաստավոր պայմաններ | Մշտապես |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 4. Աջակցություն Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը (ընտանիքների մարզման համար մարզաբազաների տրամադրում, մրցույթի նախնական և եզրափակիչ փուլերին ընտանիքների փաստացի մասնակցությանն աջակցում): | Թերի է պահպանված | Խթանել սպորտի հանդեպ սերն ու հետաքրքրությունը: | Սպորտով հետաքրքրվող համայնքի բնակիչներին ցուցաբերել աջակցություն, կազմակերպել մրցումներ, լավագույններին խրախուսել, արժանացնել մրցանակների | Մշտապես |
| 5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինների ու հասարակական կազմակերպությունների աջակցությամբ ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքներ անցկացնելու և առողջ կենսակերպի քարոզչության վերաբերյալ փաստերի առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքում կա ներուժ և հնարավորություն կազմակերպելու տարբեր սպորտաձևերի ուսուցում: Համայնքի մարզասերները զբաղվում են շախմատով և բռնցքամարտով, որի համար կան անհրաժեշտ պայմաններ:Մարզական աշխատանքների արդյունավետ իրականացման համար թերի են պահպանված մասնագետ-մարզիչների աշխատանքների ակտիվության և օժանդակության նպատակով տարվող աշխատանքները | Հրավիրել մարզի լավագույն մարզիկներին, կազմակերպել ամենամյա հանդիպումներ նրանց հետ, մշտական ուշադրության կենտրոնում պահել առողջ ապրելակերպին նպաստող | Մշտապես |
| **Անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզային և տեղական հակաանասնահամաճարակային հանձնաժողովների կազմի և հաստատված կանոնադրության հաստատում: | Թերի է պահպանված | Խախտվել են «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 17-րդ և 7-րդ հոդվածի 2-րդ կետերը | Առաջարկվել է համայնքի ղեկավարին ստեղծել հանձնաժողով | 2 ամիս |

Սույն հավելվածը կազմված է 2 օրինակից:

Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝ Ս. Ավետիսյան

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ն. Շադունց